

342.4  

---

12-91

342.4

9500

0-91

W

01 MAR 2010

Հրատարակչություն «ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ»

№ 1. Հրատարակչության նաասակն է՝ ազատի բանուրներին մտաւոր քրտագումից:

05 FEB 2010

Ռուսաստանի Սոցիալիստական

ԸՆԴԵՐԱՏԻՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ)

14548

Խորհուրդների 5-րդ Համառուսական Համագումարի որոշումը՝ ընդունւած 1918 թ. յուլիսի 10-ի նիստին:



Թիֆլիս

Արաբաթիկ ապարան Ա. Մ. Թառումեանի, Բարձրակոյն, № 21.

1919 թ.

24 JUL 2013

35.183

340  
1803-ՍԱ

\*  
\* \*

Շահագործող աշխատաւոր ժողովրդի իրաւունքների դեկլարացիան, որ հաստատւած է Խորհուրդների 3-րդ Համառուտական Համագումարում 1918 թւի յունւարին, և Խորհրդային Հանրապետութեան սահմանադրութիւնը՝ հաստատւած 5-րդ Համագումարում՝ կազմում են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Հանրապետութեան հիմնական օրէնքը:

Այս հիմնական օրէնքը պարտադիր է դառնում այն մոմէնտից, երբ նա վերջնական ձևով կը հրատարակւի «Հ. Վ. Գ. Արատուի» մէջ («Известия В. Ц. И. К.»). Նա պէտք է հրատարակւի Խորհրդային իշխանութեան բոլոր տեղական օրգանների ձեռքով և ցուցադրւի Խորհրդային բոլոր հաստատութիւնների մէջ՝ աչքի ընկնող տեղերում:

5-րդ Համագումարը յանձնարարում է Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիտսարիատին՝ Ռուսաստանի Հանրապետութեան բոլոր դպրոցական հաստատութիւններում, առանց բացառութեան, մտցնել ներկայ սահմանադրութեան հիմնական կէտերի ուսումնասիրութիւնը և նրանց բացատրութիւնն ու մեկնաբանութիւնը:

Աշխատաւորների իրաւունքների  
եւ պարտականութիւնների  
ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

„Մենք, Ռուսաստանի աշխատաւորներս— բանւոր, գիւղացի, կազակ, զինւոր եւ նաւաստի— միացած Բանւորական, Զինւորական, Գիւղացիական եւ կազակների Պատգամաւորական Խորհուրդներում, յանձին Ռուսաստանի Խորհուրդների Համառուսական Համագումարին ներկայ մեր լիազօր ներկայացուցիչների՝ ի լուր ամբողջ աշխարհի լայտարարում ու հաստատում ենք աշխատաւոր ու շահագործող ժողովրդի իրաւունքների եւ պարտականութիւնների հետեւալ գրկլարացիան.

Արտադրութեան միջոցների ու գործիքների— հողի, մեքենաների, գործարանների, երկաթուղիների, հում նիւթերի— ասլրուստի այս գլխաւոր աղբիւրների մասնաւոր սեփականութիւնը աշխատաւորներին տնտեսական կախման մէջ պահելով սեփականատէրերից, հանդիսանում է աշխատաւոր մասսաների տնտեսական շահագործման, քաղաքական ճնշումների, մտաւոր ու բարոյական սարկացման բոլոր տեսակների պատճառը:

Այս պատճառով աշխատաւորների տնտեսական

ազատագրութիւնը կապիտալի լծից՝ մեր ժամանակի ամենախոշոր հարցն է, որ պիտի իրագործւի, ինչ էլ որ լինի:

Աշխատաւորների ազատագրութիւնը պիտի իրագործւի և կարող է իրագործւել միմիայն իրենց՝ աշխատաւորներին ձեռքով, որոնք այդ նպատակով պէտք է միանան ու կազմեն Բանւորական, Գիւղացիական, Զինւորական և Ազգակների Պատգամաւորական եւրոհուրդներ:

Որպէսզի վերջ տրւի բոլոր թշուառութիւններին, որոնցից տառապում է մարդկութիւնը, և աշխատանքն ապահովւած լինի իր բոլոր իրաւունքներով, մենք անհրաժեշտ ենք համարում ոչնչացնել ներկայ հասարակակարգը, որ հիմնւած է հողի ու արտադրութեան միջոցների մասնաւոր սեփականութեան և աշխատաւոր մասսաների շահագործման ու ճնշման վրայ, և անգը հաստատել սոցիալիստական հասարակակարգ:

Այն ժամանակ ամբողջ հողն իր արտաքին ու ներքին հարստութիւններով և արտադրութեան բոլոր գործիքներն ու միջոցները, որոնք բանւոր դասակարգի ձեռքով են ստեղծւած, կը պատկանեն՝ որպէս ընդհանրական սեփականութիւն՝ ամբողջ ժողովրդին, որ կը միանայ և մի եղբայրական աշխատաւորական միութիւն կը կազմի Միայն սոցիալիստական կարգերում կը վերանայ հասարակութեան բաժանումը միմեանց թշնամի դասակարգերի, մարդու ճնշումը՝ մարդու ձեռքով, վերջ կը արւի շահագործութեանն ու դատակարգերին և բոլոր մարդիկ՝ իրաւունքներով ու պարտականութիւններով միմեանց հաւասար՝ հասարակութեանը կը տան այնքան, որքան իրենց ուժերն են ներում, և կը ստանան այնքան, որքան կարիք ունեն իրենք:

Աշխատաւորների լիակատար ազատութիւնը ճշնշումից ու շահագործութիւնից՝ տեղական կամ ազգային գործ չէ, այլ համաշխարհային, և կարող է յաղթութեամբ պահուել միմիայն բոլոր երկրների բանւորների միահամուռ ջանքերով: Այդ պատճառով իւրաքանչիւր երկրի աշխատաւորների վրայ սրբազան պարտականութիւն է ընկնում օգնութեան հասնել միւս երկրների բանւորներին, երբ նրանք սուքի են կանգնում կրպիտալիստական կարգերի գէմ:

Ռուսաստանի բանւոր դասակարգը՝ հաւատարիմ Ինտերնացիոնալի աւանդներին՝ 1917 թւի հոկտեմբերին տապօրէց սեփական բուրժուազիային և չքաւոր գիւղացիութեան հետ իր ձեռքն առաւ իշխանութիւնը:

Հաստատելով պրոլետարիատի և չքաւոր գիւղացիութեան զիկտուտւումն՝ աշխատաւորները վճռեցին խրքի կապիտալը բուրժուազիայի ձեռքից, կենդրոնացնել արտադրութեան բոլոր միջոցները սոցիալիստական սեփական ձեռքին և հնարաւոր եղածին շափ մեծացնել արտադրական ուժերի քանակը:

Այդ ուղղութեամբ արւած առաջին քայլերն են.

1) Հողի մասնաւոր սեփականութեան վերացումը, ամբողջ հողային ֆոնդը համաժողովրդական սեփականութիւն յայտարարելը և աշխատաւորներին յանձնելը՝ հաւասարապէս օգտւելու սկզբունքով:

2) Բոլոր համապետական նշանակութիւն ունեցող անտանձերը, հանքերը և ջրերը, ինչպէս և օրինակելի կալածանքների և զիւղատնտեսական ձեռնարկութիւնների բոլոր կենդանի և մեռեալ ինւենտարը համապետական սեփականութիւն յայտարարելը:

3) Արգիւնագործութեան մի շարք ճիւղերի պետա-

վանայցման (նացիոնալիզացիայի) և բանւորական կոն-տրոլին ենթարկելու օրէնքն ընդունելը:

4) Բանկերի պետականացումը, որոնք մինչև այժմ հասարակութեան կապիտալիստական շահագործման ամենագորեղ միջոցներից մէկն էին:

5) Թագաւորի կառավարութեան ժողովրդի հաշին կնքած փոխառութիւնների աննււրացիտն (ոչնչացումը), որով հարւած է հասցրած միջազգային ֆինանսական կապիտալին՝ պատերազմի այդ գլխաւոր պատճառներից մէկին:

6) Բանւորների ու գիւղացիների գինւորումը և ունեւոր դասակարգերի գինւթափութիւնը:

Իացի գրանից ծբագրւած է աշխատանքի ընդհանուր պարտաւորութիւն մտցնել՝ պաշտօնական խաւերը ոչնչացնելու նպատակով:

Նրբ ամբողջ արտադրութիւնը կենդրոնացած կը լինի միացած ու մի լայն համայնք կազմած աշխատաւոր մասսաների ձեռքին, — մի համայնք, որտեղ ամեն մի անհատի ազատ գարգացումը բոլոր մարդկանց ազատ գարգացման նախապայմանը կը լինի, երբ հին բուրժուական հասարակութեան փոխարէն՝ իր գասակարգերով ու դասակարգային թշնամութիւններով՝ վերջնականապէս կը կազմակերպւի սոցիալիստական հասարակութիւնը, հիմնւած ընդհանրական աշխատանքի, բոլոր արտադրական ուժերի ծրագրւած ու նպատակայարմար գործադրութեան ու բաշխման և իր բոլոր անդամների համերաշխութեան վրայ, — այն ժամանակ դասակարգերի վերացման հետ կը վերանայ նաև բանւոր դասակարգի ղեկատարության և պետական իշխանութեան՝ այդ դասակարգային ախրպետութեան ապարտաժողովութեան անհրաժեշտութիւնը:

Ահա Խորհրդային Հանրապետութեան անմիջական ներքին խնդիրները: Արիշների նկատմամբ Խորհրդային Հանրապետութիւնը յենւում է առաջին Խնտերնացիոնալի սկզբունքների վրայ, որոնք ճշմարտութիւնը, արդարութիւնն ու բարոյակտեսութիւնն են հիմք ընդունում բոլոր մարդկանց հետ ունենալիք յարաբերութիւնների մէջ՝ անկախ ցեղական, կրօնական կամ ազգային տարբերութիւններից: Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնն ընդունում է, որ ինչ տեղ մարդկային ընտանիքի մի օրեէ անդամը ճնշւած է՝ այնտեղ ամբողջ մարդկութիւնն է ճնշւած: Աւստի նա յայտարարում է և լիովին պաշտպանում բոլոր ազգերի ինքնորոշման իրաւունքը, այսինքն ազատ կերպով իր վիճակը տնօրինելու իրաւունքը: Նա այդ իրաւունքը տարածում է անխտիր բոլոր ազգերի վրայ, ի միջի այլոց Ասիայի և Աֆրիկայի, բոլոր գաղութների և մանր երկրների նարիւրաւոր միլիոնների հասնող աշխատաւոր բնակչութեան վրայ, որոնք մինչև այժմ անգութ կերպով կեղեքւել են կուլտուրական ասւած ազգերի դասակարգերի ձեռքով:

Իր յայտարարած սկզբունքները կեանքում իրագործելու համար, ռուսական յեղափոխութեան առաջին քայլերից յետոյ, որոնցից մէկը Լեհաստանի ազատ ինքնորոշման իրաւունքն ընդունելն էր, Խորհրդային Հանրապետութիւնը յայտարարեց — հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ — Ֆինլանդիայի կատարեալ անկախութիւնը, Աւերայնայի, Հայաստանի և ռուսական կայսրութեան բոլոր ժողովուրդների ինքնորոշման անսահման իրաւունքը: Զգուշով ստեղծել իսկապէս ազատ ու յօժարակամ հետևապէս և աւելի լիակատար ու սերտ միութիւն Աու-

սաստանի բոլոր ազգերի աշխատաւոր դասակարգերի մէջ, Խորհրդային Հանրապետութիւնը իրեն յայտարարեց Ֆեդերատիւ, Թողնելով իւրաքանչիւր ազգի բանւորներին ու գիւղացիներին ինքնուրոյն կերպով՝ իրենց իրաւագօր Խորհրդային համագումարներում որոշելու, թէ ցանկանում են արդեօք նրանք, և այ՛ն էլ ինչ հիմունքներով, մանեւ Խորհրդային Հանրապետութեան եղբայրական ընտանիքի մէջ, որպէս իրաւահաւասար անգամ:

Փորձով, և ոչ խօսքով, պատերազմ յայտարարելով պատերազմին՝ Խորհրդային Հանրապետութիւնը Ռուսաստանի բոլոր աշխատաւոր մաստաների անունից հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ նրանք միանգամայն հրաժարւում են ամեն տեսակ աշխարհակալական կամ նւաճողական ձգտումներից, ինչպէս նաև փոքր ազգերին ճնշելու որևէ մտքից: 'Իրա հետ միասին, որպէս աղացոյց իր ձգտումների՝ Խորհրդային Հանրապետութիւնը բացարձակ կերպով հրաժարեց գաղանի դիւանագիտութիւնից ու գաղանի գաշնադրութիւններից և առաջարկեց բոլոր պատերազմող ժողովուրդներին՝ ընդհանուր դեմոկրատական խաղաղութիւն կնքել առանց աննեկսիայի (բռնադրաման) և կոնարիբուցիայի (պատերազմական տուգանքի), ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքով: Այդ տեսակէտի վրայ հաստատ կանգնած է Խորհրդային Հանրապետութիւնը նաև այժմ:

Համաշխարհային իմպերիալիզմի բռնակալական քաղաքականութիւնից ստիպւած լինելով ուժեք հաւաքել և պատրաստել միջազգային կապիտալի դիշատիչների շարունակ աճող ձգտումներին հարւած հասցնելու՝ Խորհուրդների Հանրապետութիւնը ժողովուրդների

խաղաղ կենակցութեան հարցի լուծումը սպասում է բանւոր դասակարգի անխուսափելի համաշխարհային ապստամբութիւնից: Միայն համաշխարհային սոցիալիստական յեղափոխութիւնը՝ երբ իւրաքանչիւր երկրի աշխատաւորները կը տապալեն սեփական իմպերիալիստներին՝ միանգամ ընդմիշտ վերջ կը դնի պատերազմին և ամբողջ աշխարհի աշխատաւորների համերաշխութեան լիակատար իրազօրժման համար պայմաններ կը ստեղծի: Այդ նպատակն իրագործելու համար Խորհրդային Հանրապետութիւնը հրաւէր է կարգում բոլոր ժողովուրդներին:

Ընտանացիոնալի հիմնադիրների հետ միասին ընդունելով, որ չկայ իրաւունք առանց պարտականութեան, և պարտականութիւն՝ առանց իրաւունքի, Խորհրդային Հանրապետութիւնը նորոգւած հասարակութեան աշխատաւորների իրաւունքներին կից յայտարարում է նրանց հետևեալ հիմնական պարտականութիւնները.

Ամեն ձեւերով, առանց ոյժ խնայելու, կուսել՝ ամբողջ իշխանութիւնը աշխատաւորների ձեռքը տալու համար և խեղդել շահագործողներին և ճնշողներին բոլոր փորձերը՝ իշխանութիւնը նորից իրենց ձեռքը ձգելու:

2) Բոլոր միջոցներով օգնել՝ պատերազմի և բուրժուազիայի առաջացրած քայքայումը վերացնելու և նպաստել կարճ միջոցում բարձրացնելու աշխատանքի արդիւնաւորութիւնը ժողովրդական տնտեսութեան բոլոր ձեւերում:

3) Անձնական և խմբակցական շահերը ստորագասել Ռուսաստանի և ամբողջ աշխարհի աշխատաւորների շահերից:

4) Պաշտպանել Խորհրդային Հանրապետութիւնը՝ կապիտալիստական աշխարհի այս միակ Սոցիալիստական օջախը՝ համաշխարհային խմպերիալիզմի բոլոր յարձակումներէց, առանց ոյժ և նոյնիսկ կեանք խնայելու:

5) Միշտ և ամեն տեղ մի սրբազան նպատակ ունենալ—ազատել միանգամայն աշխատանքը կապիտալի իշխանութիւնից և ձգտել աշխատաւորների համաշխարհային եղբայրական միութիւն ստեղծելու:

Յայտարարելով աշխատաւորների այս իրաւունքները ու պարտականութիւնները՝ Ռուսաստանի Սոցիալիստական Հանրապետութիւնը կոչ է անում ամբողջ աշխարհի բանւոր դասակարգին կատարելու իր դերը մինչև կատարեալ յաղթանակ. և, լի հաստատուն հաւատով, որ մօտ է սոցիալիստական իդէալի իրականացումը, պարզում է իր դրօշակը՝ աշխատաւորների աւանդական մարտական կոչով՝

—Պրօլետարներ բոլոր երկրների, միացէք:

—Կեցցէ համաշխարհային Սոցիալիստական Հանրապետութիւնը:

## Ռուսաստանի Սոցիալիստական

ՔԵՆԵՐԱՏՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

### ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Բ Ա Փ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Շահագործող աշխատւոր ժողովրդի իրաւունքների դեկլարացիան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. Ռուսաստանը յայտարարում է Բանւորական, Զինուորական և Գիւղացիական Պատգամաւորական Խորհուրդների Հանրապետութիւն: Ամբողջ իշխանութիւնը՝ կենտրոնում թէ տեղում՝ պատկանում է այդ Խորհուրդներին:

2. Ռուսաստանի Խորհրդային Հանրապետութիւնը կազմակերպում է ազատ ժողովուրդների ազատ միութեան հիման վրայ, որպէս ազգային Խորհրդային Հանրապետութիւնների ֆեդերացիա:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

3. Նպատակ դնելով վերացնել մարդու ձեռքով մարդուն շահագործելու բոլոր տեսակները, ոչնչացնել միանգամայն հասարակութեան դատակարգային բաժանումները, ճնշել անխնայ շահագործողներին, հաստատել հասարակութեան սոցիալիստական կազմակերպութիւն և դիմել դէպի սոցիալիզմի յաղթանակը բոլոր երկրներում՝ Բանու, Աինու և Գիւղ. Պատգ. 3-րդ Համառուսական Համագումարը կայացնում է հետևեալ որոշումները.

ա) Հողի սոցիալիզացիան իրագործելու համար վերացուում է հողի մասնաւոր սեփականութիւնը և ամբողջ հողային ֆոնդը յայտարարուում է համաժողովրդական սեփականութիւն և տրուում աշխատաւորներին՝ առանց որևէ հատուցման՝ հողից հաւասարապէս օգտուելու սկզբունքով:

բ) Համապետական նշանակութիւն ունեցող բոլոր անտառները, հանքերը և ջրերը, ինչպէս և բոլոր կենդանի և մեռեալ ինվենտարը, օրինակելի կալածանքը և զիւղատնտեսական ձեռնարկութիւնները յայտարարուում են համաժողովրդական սեփականութիւն:

գ) Որպէս առաջին քայլ՝ գործարանները, հանքերը, երկաթուղիները և արտադրութեան ու հաղորդակցութեան միւս միջոցները Բանուրա-Գիւղացիական Խորհրդրդային Հանրապետութեան լիակատար սեփականութիւնը դարձնելու—հաստատուում է բանուրական կոնտրոլի և ժողովրդական Տնտեսութեան Բարձրագոյն Խորհրդի մասին հրատարակուած Խորհրդային օրէնքը, որպէսզի ապահովուած լինի աշխատաւորների իշխանութիւնը շահագործողների դիմին:

դ) Որպէս առաջին հարուած միջազգային բանկային, ֆինանսական կապիտալին՝ Խորհուրդների 3-րդ Համագումարը հաստատում է կայսերական կառավարութեան, կալածատէրերի և բուրժուազիայի կրնքած փոխառութիւնների աննուլացիայի (ոչնչացման) Խորհրդային օրէնքը, վստահ լինելով, որ Խորհրդային իշխանութիւնը հաստատուն քայլերով առաջ կընթանայ նոյն ճանապարհով մինչև միջազգային բանուրական ապստամբութեան լիակատար յաղթանակը ընդդէմ կապիտալի լծի:

ե) Հաստատուում է բոլոր բանկերի՝ բանուրա-գիւղացիական պետութեան սեփականութիւն դառնալը, որպէս աշխատաւոր մասսաների՝ կապիտալի լծից ազատելու պայմաններից մէկը:

զ) Հասարակութեան պարագիտական խուռերի ոչնչացման նպատակով մտցուում է աշխատելու ընդհանուր պարտաւորութիւն:

է) Ամբողջ իշխանութիւնը աշխատաւոր մասսաների ձեռքին պահելու և շահագործողների իշխանութեան վերահաստատման հնարաւորութիւնը վերացնելու նպատակով հրահանգուում է զինել աշխատաւորներին, բանուրաների և զիւղացիների սոցիալիստական կարմիր բանակ կազմել և միանգամայն զինաթափ անել ունեւոր դասակարգերին:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

4. Արտայայտելով իր անյողողի վճռականութիւնը՝ դուրս կորզելու մարդկութիւնը կապիտալի և իմպերիալիզմի ճիրաններից, որոնք երկիրը լցրին արիւ-

նով ներկայ ամենածրագործ պատերազմում, Խորհուրդ-  
ների 3-րդ Համագումարը միանգամայն միանում է Խոր-  
հրդային իշխանութեան վարած քաղաքականութեանը՝  
քանդելու դադանի գաշնազրեքը, ամենալայն ծալալով  
եղբայրացում կազմակերպելու ներկայումս իրար դեմ  
կուսոյ բանակների բանուորների ու գիւղացիների մէջ  
և յեղափոխական միջոցներով հասնելու՝ ինչ էլ որ լինի՝  
գեմեկրատական խաղաղութեան աշխատաւորների մէջ,  
առանց անեկսիայի և կոնտրիբուցիայի, ազգերի ազատ  
ինքնորոշման սկզբունքով:

5. Նոյն նպատակով Խորհուրդների 3-րդ համա-  
գումարը պահանջում է վերջ տալ միանգամայն բուր-  
ժուական քաղաքակրթութեան բարբարոս քաղաքակա-  
նութեանը, որը մի քանի ընտրեալ ազգերի շահագոր-  
ծողների բարօրութիւնը հիմնում է հարկւրաւոր միլիոն-  
ների հասնող աշխատաւորութեան սարկացման վրայ Ս-  
սիայում, գաղութներում, առհասարակ մանր երկըր-  
ներում:

6. Խորհուրդների 3-րդ Համագումարը ողջունում  
է ժողովրդական կոմիսարների Խորհրդի քաղաքականու-  
թիւնը, որ յայտարարեց Ֆինլանդիայի կառարեալ ան-  
կախութիւնը, սկսեց զօրքերը դուրս բերել Պարսկաս-  
տանից և յայտարարեց Հայաստանի ինքնորոշման ազա-  
տութիւնը:

**ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԻ**

7. Բանւ. Ջինւ. և Գիւզ. Պատգ. Խորհ. 3-րդ  
Համագումարը ընդունում է, որ ներկայումս, երբ պրո-  
լետարիատը վճռական կռիւ է սկսել իրեն շահագործող-



ների դեմ, շահագործողները չեն կարող տեղ ունենալ  
իշխանութեան որևէ օրգանի մէջ: Իշխանութիւնը ամ-  
բողջովին և բացառապէս պէտք է պատկանի աշխատա-  
ւոր մասսաներին և նրանց իրաւագոր ներկայացուցիչ-  
ներին՝ Բանուորական, Ջինւորական և Գիւղացիական  
Պատգամաւորների Խորհուրդներին:

8. Միաժամանակ ձգտելով ստեղծել իսկապէս ա-  
զատ ու յօժարակամ, հետեւապէս և աւելի լիակատար ու  
սերտ միութիւն Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատա-  
ւոր դասակարգերի մէջ, Խորհուրդների 3-րդ Համագու-  
մարը բաւականանում է Ռուսաստանի Խորհրդային Հան-  
րապետութիւնների Ֆեդերացիայի հիմնական սկզբունք-  
ները սահմանելով, թողնելով իւրաքանչիւր ազգութեան  
բանուորներին ու գիւղացիներին ինքնուրոյն կերպով ու-  
րջելու իրենց սեփական իրաւագոր խորհրդային համա-  
գումարում՝ թէ ցանկանում են արդեօք նրանք, և այն  
էլ ինչ հիմունքներով, մասնակցելու Ֆեդերատիւ կառա-  
վարութեան, ինչպէս և այլ Ֆեդերատիւ Խորհրդային  
հաստատութիւնների մէջ:

84541

**Բ Ա Ճ Ի Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ**

Ռուսաստանի Սոցիալիստական Ընդերաշխ  
Խորհրդային Հանրապետութեան սահմանադրու-  
թեան ընդհանուր հիմունքները:

**ԳԼՈՒԽ ՀԻՆԳՆՐՈՐԳ**

9. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ  
Խորհրդային Հանրապետութեան ներկայ անցողական

չըջանի համար կազմած սահմանադրութեան գլխաւոր դերը պիտի լինի—հաստատել քաղաքային ու զիւղական պրոլետարիատի և չքաւոր գիւղացիութեան դիկտատուրան՝ յանձին Համառուսական Խորհրդային հզօր իշխանութեան, որի նպատակը լինելու է՝ ձեռքի միանգամայն բուրժուազիային, վերացնել մարդկանց շահագործումը մարդկանց ձեռքով և հաստատել սոցիալիզմը, որի ժամանակ գոյութիւն չեն ունենալու ո՛չ դասակարգային բաժանումներ, ո՛չ էլ պետական իշխանութիւն:

10. Ռուսաստանի Հանրապետութիւնը Ռուսաստանի բոլոր աշխատաւորների ազատ սոցիալիստական հասարակութիւնն է: Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան սահմաններում ամբողջ իշխանութիւնը պատկանում է երկրի բոլոր աշխատաւոր բնակչութեանը, որ միացած է քաղաքային և գիւղական Խորհուրդների մէջ:

11. Կենցաղով ու ազգային կազմով տարբեր երկրամասերի Խորհուրդները կարող են միանալ ու կազմել աւտոնոմ երկրամասային միութիւններ, որոնք, ինչպէս և առհասարակ բոլոր ազգայնում կազմելիք միաւորութիւնները, իրենց զուխ են ունենալու Խորհուրդների Յրկրամասային Համագումարները և նրանց գործադիր օրգանները:

Այս աւտոնոմ միութիւնները ֆեդերացիայի սկզբունքով մտնում են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան մէջ:

12. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է Խորհուրդների Համառուսական Համագումարին, իսկ մի համագումարից մինչև միւսը՝ Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէին:

13. Որպէսզի իւրճի ազատութիւնը իսկապէս ապա-

հովւած լինի աշխատաւորների համար՝ եկեղեցին բաժանում է պետութիւնից և դպրոցը եկեղեցուց, իսկ բոլոր քաղաքացիներին տրւում է կրօնական ու հակակրօնական պրոպագանդայի կաօարեալ ազատութիւն:

14. Մտքերի արտայայտութեան ազատութիւնը աշխատաւորների համար իրապէս ապահովելու նպատակով Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. վերացնում է մամուլի կախումը կապիտալից և բոլոր տեխնիքական ու նիւթական միջոցները տալիս է բանւոր դասակարգի և չքաւոր գիւղացիութեան ձեռքը՝ լրագիրներ, բրոշուրներ, վրձեր և ամեն տեսակ հրատարակութիւններ անելու համար, և ապահովում նրանց ազատ տարածումն ամբողջ երկրում:

15. Աշխատաւորների համար ժողովների ազատութիւնը իրապէս ապահովելու նպատակով Ռ. Ս. Ֆ. Խ. Հ., ընդունելով, որ Խորհրդային Հանրապետութեան քաղաքացիները ազատ իրաւունք ունեն ժողովներ, միտինգներ, թափօրներ և ամեն տեսակ հաւաքոյթներ ու հանդէսներ կազմակերպելու, բանւոր դասակարգի և չքաւոր գիւղացիութեան արամադրութեան տակ է դնում հաւաքոյթների համար պիտանի բոլոր շէնքերը՝ իրենց կահաւորութեամբ, լուստւորութեամբ և վառելիքով:

16. Աշխատաւորների համար միութիւնների ազատութիւնը իսկապէս ապահովելու նպատակով Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութիւնը՝ ունենալ դասակարգերի տնտեսական ու քաղաքական իշխանութիւնը խորտակելով և այդպիսով վերացնելով բոլոր արգելքները, որոնք մինչև այժմ բուրժուական հասարակութեան մէջ խոչընդոտ են հանգիսացել բանւորներին ու գիւղացիներին օգտւելու կազմակերպութեան ու գործողութեան ազատութիւնից—բանւորներին ու չքաւոր գիւղացիներին ամեն տեսակ օգնութիւն է հայթայթում, թէ՛ նիւթապէս և թէ՛ այլ կերպ, նրանց միութեան և կազմակերպութեան համար:

17. Աշխատաւորների առաջ գիտութեան դռները բանալու համար Ռ. Ս. Փ. Խ. Հ. նպատակ է դնում իրեն՝ բանւորներին ու չքաւոր գիւղացիներին տալ լիակատար և բազմակողմանի ձրի ուսում:

18. Ռ. Ս. Փ. Խ. Հ. աշխատանքը Հանրապետութեան բոլոր քաղաքացիների պարտաւորութիւնն է համարում և յայտարարում հետևեալ լոզունգը. «Ով չի աշխատու՞մ՝ չպէտք է ուտի»:

19. Բանւոր-գիւղացիական մեծ յեղափոխութեան նեւձումներն ամեն կերպ պահպանելու նպատակով Ռ. Ս. Փ. Խ. Հ. սոցիալիստական հայրենիքի պաշտպանութիւնը Հանրապետութեան բոլոր քաղաքացիների պարտքն է համարում և մտնցում է ընդհանուր գինւորական ծառայութիւն: Յեղափոխութիւնը զէնքը ձեռքին պաշտպանելու պատաւոր իրաւունքը վերապահում է միմիայն աշխատաւորներին, իսկ ոչ-աշխատաւորներին մնում է գինւորական միւս պարտաւորութիւնները:

20. Բոլոր ազգերի աշխատաւորների համերաշխութիւնն ի նկատի ունենալով, Ռ. Ս. Փ. Խ. Հ. Ռուսաստանի քաղաքացիների բոլոր քաղաքական իրաւունքները տարածում է Ռուսաստանի Հանրապետութեան տերրիտորիայում բնակող բոլոր այն օտարազգիների վրայ, որոնք իրենց աշխատանքով են ապրում և պատկանում են բանւոր դասակարգին կամ օտարի աշխատանքը չը շահագործող գիւղացիութեանը, և տեղական Խորհուրդներին է վերապահում Ռուսաստանի քաղաքացիութեան իրաւունք տալ այդպիսի օտարազգիներին՝ առանց կաշկանդող ձևականութիւնների:

21. Ռ. Ս. Փ. Խ. Հ. ապաստան է տալիս այն բոլոր օտարազգիներին, որոնք հալածւում են քաղաքական կամ կրօնական յանցանքների համար:

22. Ռ. Ս. Փ. Խ. Հ., ընդունելով բոլոր քաղաքա-

ցիների իրաւահաւասարութիւնը՝ անկախ ցեղական ու ազգային ծագումից, Հանրապետութեան հիմնական օրէնքներին դէմ է համարում՝ սահմանել կամ թոյլ տալ, որ գոյութիւն ունենան զանազան արտօնութիւններ ու առաւելութիւններ ծագման հիման վրայ, ինչպէս և որևէ ճնշում՝ ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ կամ որևէ սահմանափակում նրանց իրաւահաւասարութեան:

23. Բանւոր դասակարգի ամբողջութեան շահն ի նկատի առնելով Ռ. Ս. Փ. Խ. Հ. զրկում է առանձին անհատներին ու առանձին խմբակցութիւնները այն իրաւունքներից, որոնցով նրանք օգտւում են ի վնաս սոցիալիստական յեղափոխութեան շահերի:

**Բ Ա Փ Ի Ն Ե Ր Ր Ո Ր Գ**

**Խորհրդային իշխանութեան սահմանադրութիւնը**

**Ա. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ**

**ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԻ**

Բանւորական, գիւղացիական, կազակների եւ կարմիր բանակի պատգամաւորական խորհուրդների հանձնառուական հանձնադրւածի մասին.

24. Խորհուրդների Համառուսական Համագումարը Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային

Հանրապետութեան բարձրագոյն իշխանութիւնն է:

25. Խորհուրդների Համառուսական Համագումարը կազմուում է Գաղարային Խորհուրդների ներկայացուցիչներից՝ իւրաքանչիւր 25,000 ընտրողին տալով 1 պատգամաւոր, և Խորհուրդների Նահանգական Համագումարների ներկայացուցիչներից՝ իւրաքանչիւր 125,000 բնակչին 1 պատգամաւոր տալով:

Ծանօթութիւն 1. Երբ Խորհուրդները Նահանգական Համագումարը չի նախորդում Համառուսականին՝ ղեկեղատներն ուղարկուում են անմիջապէս Գաւառական Համագումարների կողմից:

Ծանօթութիւն 2. Երբ Խորհուրդները Երկրամասային Համագումարը անմիջապէս նախորդում է Համառուսականին՝ ղեկեղատները կարող են ուղարկել Երկրամասային Համագումարի կողմից:

26. Խորհուրդները Համառուսական Համագումարը հրաւիրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտէի կողմից՝ տարեկան առնւազը 2 անգամ:

27. Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէն հրաւիրում է արտակարգ Համառուսական Համագումար սեփական հայեցողութեամբ կամ տեղական Խորհուրդների պահանջով, եթէ այդ տեղերի բնակիչների ընդհանուր թիւը Հանրապետութեան բնակչութեան  $\frac{1}{3}$ -ից պակաս չէ:

28. Խորհուրդների Համառուսական Համագումարն ընտրում է Հ. Կ. Գ. Կ.՝ բաղկացած ոչ աւելի քան 200 անդամից:

29. Համառուսական Կ. Գ. Կ. միանգամայն պատասխանատու է Խորհուրդների Համառուսական Համագումարի առաջ:

30. Մի համագումարից մինչև միւսը Հանրապե-

տութեան բարձրագոյն իշխանութիւնը Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէն է:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆՆԵՐՈՐԿ

Հանրառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի մասին.

31. Հ. Կ. Գ. Կ. Ռուսաստանի Ս. Ֆ. Ս. Հ. բարձրագոյն օրէնսդրական, կարգադրիչ և վերաստուգիչ օրգանն է:

32. Հ. Կ. Գ. Կ. ընդհանուր սեղջութիւն է տալիս բանօրոք-գիւղացիական կառավարութեան և Խորհրդային իշխանութեան բոլոր օրգանների գործունէութեանը ամբողջ երկրում, միացնում ու համաձայնեցնում է օրէնսդրական և վարչական աշխատանքները և հսկում թէ ինչպէս են գործադրուում կեանքում Խորհրդային սահմանադրութիւնը, Խորհուրդների Համառուսական Համագումարի և Խորհրդային իշխանութեան կենտրոնական օրգանների որոշումները:

33. Հ. Կ. Գ. Կ. քննութեան է առնում և հաստատում Ժողովրդական Կոմիտեաների կամ առանձին վարչութիւնների մշակած ղեկրեաների նախագծերն ու այլ առաջադրութիւնները և հրատարակում սեփական ղեկրեաներն ու կարգադրութիւնները:

34. Հ. Կ. Գ. Կ. հրաւիրում է Խորհուրդների Համառուսական Համագումար, որին հաշիւ է տալիս իր գործունէութեան մասին և ղեկուցումներ ներկայացնում ընդհանուր քաղաքականութեան և առանձին հարցերի մասին:

35. Հ. Կ. Գ. Կ. կազմում է Ժողովրդական Կոմիտեաների Խորհուրդ՝ Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. գործերին ընդհա-

նուր ուղղութիւն տալու համար, և բաժանմունքներ՝ (ժողովրդական կոմիսարիատներ) վարչական առանձին ճիւղաւորութիւնների ղեկավարութեան համար:

36. Հ. Կ. Գ. Կ. անդամները աշխատում են բաժանմունքներում (ժողովրդական կոմիսարիատներում) կամ կատարում Հ. Կ. Գ. Կ. յատուկ յանձնարարութիւնները:

ՎԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԳ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի մասին.

37. Ժող. Կոմ. Խորհրդին վերապահւած է Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. գործերի բնդհանուր ղեկավարութիւնը:

38. Իր այս գերը կատարելու համար Ժող. Կոմ. Խորհուրդը հրատարակում է ղեկընտներ, կարգադրութիւններ, հրահանգներ և գործադրում պէտք եղած բոլոր միջոցները, որպէսզի պետական կեանքը կանոնաւոր և արագ առաջ ընթանայ:

39. Իր բոլոր որոշումների և վճիռների մասին Ժող. Կոմ. Խորհ. անմիջապէս յայտնում է Հ. Կ. Գ. Կ.:

40. Հ. Կ. Գ. Կ. իրաւունք ունի Ժող. Կոմ. Խորհ. ամեն մի որոշումը կամ վճիռը փոխելու կամ դադարեցնելու:

41. Ժող. Կոմ. Խորհրդի բոլոր այն որոշումներն ու վճիռները, որոնք խոշոր բնդհանուր-քաղաքական նշանակութիւն ունեն՝ ներկայացւում են Հ. Կ. Գ. Կ. քննութեանն ու հաստատութեանը:

Մանօրութիւն. Այն ձեռնարկութիւնները, որոնց գործադրութիւնն անկարելի է յետաձգել, Ժող. Կոմ. Խորհ. կարող է իրագործել անմիջապէս:

42. Ժող. Կոմ. Խորհ. անդամները առանձին ժո-

ղովրդական կոմիսարիատների ղեկավարներն են:

43. Գոյութիւն ունեն հետեւեալ 17 կոմիսարիատները.

- ա) Արտաքին գործոց.
- բ) Զինւորական.
- գ) Ծովային.
- դ) Ներքին գործոց.
- ե) Արդարադատութեան.
- զ) Աշխատանքի.
- է) Սոցիալական տպահովութեան.
- ը) Ժողովրդական լուսաւորութեան.
- թ) Պոստի և հեռագրի.
- ժ) Ազգային գործերի.
- ի) Ֆինանսների.
- լ) ձանապարհների.
- խ) Հողային.
- ծ) Արևտրի և արդէւնաբերութեան.
- կ) Ժողովրդական պարենաւորման.
- հ) Պետական կոնարոլի.
- ձ) Ժող. Տնտեսութեան Բարձրագոյն Խորհրդի.
- ղ) Առողջապահութեան:

44. Իւրաքանչիւր Ժող. Կոմիսարին կից, նրա նախագահութեան տակ, կազմւում է մի կոլլեգիա, որի անդամները հաստատւում են Ժող. Կոմ. Խորհրդի կողմից:

45. Ժողովրդական Կոմիսարն իրաւունք ունի անձամբ որոշումներ կայացնելու այն բոլոր հարցերի նկատմամբ, որոնք ենթակայ են համապատասխան կոմիսարիատին: Այն դէպքում, երբ կոլլեգիան համաձայն չէ Ժող. Կոմիսարի այս կամ այն որոշման հետ, կարող է՝ առանց որոշման իրագործումը դադարեցնելու՝ բողոքել այդ մասին Հ. Կ. Գ. Կ. Պրեզիդիումին:

Բողոքի այդ իրաւունքը պատկանում է նաև կոլլեգիայի առանձին անդամներին:

46. Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը միանգամայն պատասխանատու է Խորհուրդների Համառուտական Համագումարի և Հ. Կ. Գ. Կ. առաջ:

47. Ժողովրդական Կոմիսարները և ժողովրդական Կոմիսարիատների կոլլեգիաները պատասխանատու են ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Հ. Կ. Գ. Կ. առաջ:

48. Ժողովրդական Կոմիսար անունը վերապահւում է միայն Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ընդհանուր գործերը վարող ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անդամներին. Խորհրդային իշխանութեան ոչ մի այլ ներկայացուցչի չի կարող արել այդ անունը թէ կենարոնում և թէ տեղում:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՒԳ

Խորհուրդների Համառուտական Համագումարին եւ Համառուտական Կենտր. Գործ. Կոմիտէին ենթակայ են բոլոր համապետական նշանակութիւն ունեցող հարցերը. այն է—

49. Խորհուրդների Համառուտական Համագումարին և Համառուտական Կենտր. Գործ. Կոմիտէին ենթակայ են բոլոր համապետական նշանակութիւն ունեցող հարցերը. այն է—

- ա) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. սահմանադրութեան հաստատումը, փոփոխութիւնն ու լրացումը:
- բ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ամբողջ արտաքին ու ներքին քաղաքականութեան ընդհանուր զեկալարութիւնը:
- գ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. սահմանների որոշումն ու փոփոխութիւնը, ինչպէս նաև Հանրապետութեան տերրի-

տորիայի այս կամ այն մասից կամ նրան պատկանող իրաւունքներից հրաժարելու իրաւասութիւնը:

դ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. կազմի մէջ մտնող երկրամասային Խորհրդային միութիւնների սահմանների և իրաւասութեան որոշումը և նրանց մէջ ծագած վէճերի լուծումը:

ե) Խորհրդային Հանրապետութեան նոր անդամների ընդունելութիւնը Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. կազմի մէջ, ինչպէս նաև Խորհրդային Ֆեդերացիայի կազմից նրա առանձին մասերի հեռացումն ընդունելը:

զ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. տերրիտորիայի ընդհանուր ազմինիսարաաիւ բաժանումը և երկրամասային միաւորութիւնների հաստատութիւնը:

է) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. տերրիտորիայում չափերի, կշռի և փողային սիստեմի սահմանումն ու փոփոխութիւնը:

ը) Օտար պետութիւնների հետ յարաբերութիւն պահպանելը, պատերազմ հրատարակելը և խաղաղութիւն կնքելը:

թ) Փոխառութիւններ, մաքսային ու առևտրական պայմանագրութիւններ և ֆինանսական համաձայնութիւններ կնքելը:

ժ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ամբողջ ժողովրդական տնտեսութեան, ինչպէս և նրա առանձին ճիւղերի հիմունքներն ու ընդհանուր պլանը որոշելը:

ի) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. բիւջէի հաստատումը:

լ) Համազեպական հարկերի ու պարտաւորութիւնների սահմանումը:

կ) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. զինւած ոյժերի կազմակերպութեան հիմունքների սահմանումը:

ծ) Համապետական օրէնսդրութիւնը, գատարանի կազմակերպութիւնն ու գատավարութիւնը, քաղաքացի-

ական, քրէական օրէնագրութիւնը և այլն:

կ) Ժ. Կ. Խ. ամբողջ կազմի և առանձին անդամների նշանակելը, փոփոխութեան ենթարկելը և ամբողջովին փոխելը, ինչպէս նաև Ժ. Կ. Խ. նախագահի հաստատութիւնը:

հ) Ընդհանուր որոշումներ հրատարակելը, թէ ինչ պայմաններում են ձեռք բերում Ռուսաստանի քաղաքացիութեան իրաւունքները կամ զրկում նրանցից, և ինչ իրաւունքներով են օգտուում հասարակապետութեան տերրիտորիայի վրայ գտնւած օտարազգիները:

ձ) Ընդհանուր և մասնակի ամենատիայի իրաւունքը:

50. Բացի յիշեալ հարցերից Խորհուրդների Համառուսական Համագումարի և Կ. Գ. Կ. իրաւասութեանը ենթակայ են այն բոլոր հարցերը, որոնց լուծումը այդ հաստատութիւնները իրենց ենթակայ կը համարին:

51. Խորհուրդների Համառուսական Համագումարի բացառիկ իրաւասութեանն են ենթակայ՝

ա) Խորհրդային սահմանադրութեան հիմնական սկզբունքների սահմանումը, լրացումը և փոփոխութիւնը:

բ) Սաղագրութեան պայմանների բառիֆիկացիան:

52. 1 յօդու. գ. և ը. կէտերում մատնանշւած հարցերի լուծումը վերապահուում է Կ. Գ. Կ. միայն այն դէպքում, երբ անկարելի է Խորհուրդների Համառուսական Համագումար հրաւիրել:

Բ. ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՂԽԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՏԵՂՈՒՄ.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԿ

Խորհուրդների համագումարների մասին.

53. Խորհուրդների համագումարները կազմում են հետևեալ եզանակով.

ա) Երկրամասայինները—քաղաքային խորհուրդների և գաւառական համագումարների ներկայացուցիչներից, այն հաշւով, որ իւրաքանչիւր 25 հազար բնակչին ընկնի 1 պատգամաւոր, իսկ քաղաքներից՝ իւրաքանչիւր 5 հազար ընտրողին մէկը, միայն թէ ամբողջ երկրամասի տաժ պատգամաւորների թիւը 500-ից չանցնի,—կամ Խորհուրդների նահանգական համագումարների ներկայացուցիչներից, ընտրւած նոյն նորմայով, եթէ այդ համագումարը տեղի ունի երկրամասի համագումարից անմիջապէս առաջ:

բ) Նահանգականները (շրջանայինները)—քաղաքային Խորհուրդների և գաւառամասային համագումարների ներկայացուցիչներից, այն հաշւով, որ իւրաքանչիւր 10 հազար բնակչին ընկնի 1 պատգամաւոր, իսկ քաղաքներից՝ իւրաքանչիւր 2 հազար ընտրողին մէկը,—միայն թէ նահանգի (շրջանի) տաժ պատգամաւորների թիւը 300-ից չանցնի. այն դէպքում, երբ Խորհուրդների գաւառական համագումարը հրաւիրուում է նահանգականից անմիջապէս առաջ, ընտրութիւնները կատարւում է ոչ թէ գաւառամասային, այլ գաւառական համագումար՝ նոյն նորմայով:

գ) Գաւառականները (բայիտնականները)—գիւղական Խորհուրդների ներկայացուցիչներից, այն հաշւով, որ իւրաքանչիւր 1000 բնակչին ընկնի 1 պատգամաւոր. սակայն ոչ աւելի, քան 300 պատգամաւոր՝ ամբողջ գաւառից (բայիտնից):

դ) Գաւառամասայինները—գաւառամասի բոլոր գիւղական Խորհուրդներից, այն հաշւով, որ Խորհրդի իւրաքանչիւր 10 անդամին ընկնի 1 պատգամաւոր:

Մասնորոշում 1. Գաւառական համագումարներին մասնակցում են այն քաղաքների Խորհուրդների ներկայացուցիչները, որոնց բնակչութիւնը 10 հազարից չի

անցնում. այն տեղերի գիւղական Խորհուրդները, որոնց բնակչութիւնը 1 հազարից պակաս է, գաւառական համագումարի համար պատգամաւորներ ընտրելիս միանում են իրար հետ:

Ծանօթութիւն 2. Տասից պակաս անդամ ունեցող Խորհուրդները գաւառամասի համագումարի համար տալիս են մի-մի ներկայացուցիչ:

54 Խորհուրդների համագումար հրաւիրում է իւրաքանչիւր տերրիտորիայի Խորհրդային իշխանութեան գործադիր օրգանը (Գործադիր Կոմիտէն) իր հայեցողութեամբ կամ այն տեղական խորհուրդների պահանջով, որոնք տւեալ րայիոնի բնակչութեան առ նւազն  $\frac{1}{3}$  մասի ներկայացուցիչներն են, սակայն, յամենայն դէպս, ոչ սակաւ քան տարին երկու անգամ՝ երկրամասում, երեք ամիսը մի անգամ՝ նահանգում ու գաւառում և ամիսը մի անգամ՝ գաւառամասում:

55. Խորհուրդների համագումարը (երկրամասի, նահանգի, գաւառի, գաւառամասի) ընտրում է իր գործադիր օրգանը—Գործադիր Կոմիտէն, որի անդամների թիւը չպէտք է աւելի լինի՝ ա) երկրամասում 25-ից, բ) գաւառում 20-ից, գ) գաւառամասում 10-ից: Գործադիր Կոմիտէն ամողջովին պատասխանատու է իրեն ընտրող Խորհրդային Համագումարի առաջ:

56. Խորհուրդների Համագումարը (երկրամասի, նահանգի, գաւառի, գաւառամասի) տւեալ տերրիտորիայի բարձրագոյն իշխանութիւնն է՝ իր իրաւասութեան սահմաններում. մի համագումարից մինչև միւսը այդ իշխանութիւնը պատկանում է Գործադիր Կոմիտէին:

**ԳՂՈՒԽ ՏԱՍՆՈՒՄԷԿԵՐՈՐԳ**

*Պատգամաւորական Խորհուրդների մասին.*

57. Պատգամաւորական Խորհուրդները կազմւում են.

ա) Գաղաքներում—իւրաքանչիւր 1000 բնակչին տարով մի պատգամաւոր, որոնց թիւը 50-ից պակաս չպէտք է լինի և 1000-ից աւելի:

բ) Գիւղական վայրերում—(գիւղերում, չէներում, գիւղաքաղաքներում, ստանիցաներում, տուլներում, ագարակներում և այլն, նաև այն քաղաքներում, որոնց բնակչութիւնը 10000-ից պակաս է)—իւրաքանչիւր 100 բնակչին տարով մի պատգամաւոր, որոնց թիւը 3-ից պակաս չպէտք է լինի և 50-ից աւելի:

Պատգամաւորների լիազօրութեան ժամանակամիջոցը 3 ամիս է:

Ծանօթութիւն. Այն գիւղական վայրերում, որտեղ հնարաւորութիւն կայ, վարչական հարցերը իրենց անմիջական լուծումն ստանում են տւեալ գիւղավայրի ընտրողների ընդհանուր ժողովում:

58. Ընթացիկ աշխատանքի համար պատգամաւորների Խորհուրդը իր միջից ընտրում է գործադիր մարմին (Գործադիր Կոմիտէ), որի անդամների թիւը գիւղավայրերում 5-ից աւելի չպէտք է լինի, իսկ քաղաքներում՝ իւրաքանչիւր 50 պատգամաւորին՝ պէտք է տրւի 1 մարդ, սակայն ընդամենը 3-ից ոչ պակաս, 15-ից ոչ աւելի (Պետերբուրգում և Մոսկւայում 40-ից ոչ աւելի): Գործադիր Կոմիտէն միանգամայն պատասխանատու է իրեն ընտրող Խորհրդի առաջ:

59. Պատգամաւորական Խորհուրդը հրաւիրւում է Գործադիր Կոմիտէի կողմից, վերջինիս հայեցողութեամբ կամ Խորհրդի անդամների՝ ոչ պակաս քան կէսի պահանջով, քաղաքներում՝ շաբաթական 1 անգամից ոչ ուշ-ուշ, գիւղերում՝ շաբաթը 2 անգամից ոչ ուշ-ուշ:

60. Իր իրաւասութեան սահմաններում Խորհուրդը— իսկ 57-րդ §-ում (ծանօթութեան մէջ) նախատեսուած

դէպքում՝ ընտրողների ընդհանուր ժողովը—տւեալ տեր-  
րիտորիայի բարձրագոյն իշխանութիւնն է:

#### ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԻ

*Տեղակալն Խորհրդային իշխանութեան օրգան-  
ներին եւ նրակայ հարցերը.*

Խորհրդային իշխանութեան երկրամասային, նա-  
հանգական, գաւառական, գաւառամասային օրգանների  
զբաղմունքի աւարկաներն են.

ա) իրագործել կեանքում Խորհրդային իշխանու-  
թեան համապատասխան վերին օրգանների սրբազանները-  
բ) միջոցներ ձեռք առնել տւեալ տեղը կուլտու-  
րայէս և տնտեսապէս բարձրացնելու.

գ) լուծել այն բոլոր հարցերը, որոնք զուտ տեղա-  
կան (տւեալ տերրիտորիայի համար) նշանակութիւն  
ունեն:

դ) միացնել տւեալ տերրիտորիայի Խորհրդային  
ամբողջ գործունէութիւնը:

62. Խորհուրդների Համագումարները և նրանց  
Գործադիր Կոմիտէները իրաւունք ունեն կոնտրոլի եւ-  
թարկելու տեղական Խորհուրդների գործունէութիւնը  
(այսինքն՝ երկրամասերինը իրաւունք ունեն կոնտրոլի  
ենթարկելու տւեալ երկրամասի բոլոր Խորհուրդների  
գործունէութիւնը, նահանգականները՝ տւեալ նահանգի  
Խորհուրդների գոյ ծունկութիւնը, բացի այն քաղաքների  
Խորհուրդներից, որոնք գաւառական համագումարների  
կազմի մէջ չեն մտնում, և այլն), իսկ երկրամասային ու  
նահանգական համագումարներին և նրանց գործադիր  
կոմիտէներին բացի զրանից վերապահուում է նաև իրենց  
րայիսնում գործող Խորհուրդների սրբազանները բեկանելու

իրաւունքը, յայտնելով այդ մասին՝ կարևոր դէպքերում՝  
Գեներալական Խորհրդային իշխանութեանը:

63. Խորհրդային իշխանութեան օրգանների վրայ  
գրւած պարտականութիւնների իրագործման համար  
Խորհուրդներին (քաղաքային ու գիւղական) և Գործա-  
դիր Կոմիտէներին (երկրամասային, նահանգական, գա-  
ւառական և գաւառամասային) կից կազմակերպոււմ են  
համապատասխան բաժանմունքներ՝ իրենց կառավարիչ-  
ների ղեկավարութեան տակ:

#### Բ Ա Փ Ի Ն Զ Ո Ր Ր Ո Ր Գ

#### ԱԿՏԻ ԵՒ ՊԱՍՍԻ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆԵՐ

#### ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԻ

64. Խորհուրդների համար ընտրելու և ընտրելու  
իրաւունք ունեն՝ անկախ գաւառաբանական, ազգային,  
նստակեցութեան և այլ տարբերութիւններից՝ Ռուսաս-  
տանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հան-  
րապետութեան հետեալ երկսեռ քաղաքացիները, որոնց  
18 տարին լրացած է ընտրութիւնների օրը:

ա) Նրանք, ովքեր իրենց ապրուստի միջոցները  
ձեռք են բերում արտադրական և հասարակութեան հա-  
մար պիտանի աշխատանքով, ինչպէս նաև տնային տըն-  
տեսութեամբ զբաղւողները, որոնք հնարաւորութիւն են  
տալիս առաջիններին արտադրական աշխատանքով պա-  
րապելու. այն է՝ ամեն կարգի ու աստիճանի բանուոր-  
ներն ու ծառայողները, որոնք զբաղւած են արդիւնա-  
գործութեան, վաճառականութեան, գիւղատնտեսու-  
թեան մէջ և այլն, ապա այն գիւղացիներն ու երկրա-

գործ-կազակները, որոնք վարձու աշխատանք չեն գործ ածում շահեկու նպատակով:

բ) Խորհրդային բանակի և նաւատորմի գինւորները:

գ) Այն քաղաքացիները, որոնք մտնում են 64-րդ յօդւ. 1 և 2 կէտերում յիշած կատեգորիաների մէջ և որոշ շափով գրկած են աշխատելու ընդունակութիւնից:

Ծանօթութիւն 1. Տեղական Խորհուրդները կարող են՝ Կենտրոնական իշխանութեան հաւանութեամբ՝ իջեցնել այս յօդւածում նշանակած հասակի սահման:

Ծանօթութիւն 2. Ռուսաստանի քաղաքացիների կարգը չանցած անհատներից ազտիւ և պասսիւ ընտրողական իրաւունքից օգտուում են նաև նրանք, որոնց մասին յիշատակւած է 20-րդ յօդւածում (Քաթին երկրորդ, Գլ. հինգերորդ):

65. Ընտրել և ընտրել չեն կարող, եթէ նոյնիսկ նրանք մտնէին վերև յիշած կատեգորիաներից մէկի մէջ—

ա) այն մարդիկ, որոնք վարձու աշխատանք են գործ ածում շահեկու նպատակով.

բ) նրանք, որոնք անաշխատ եկամուտով են ապրում, այն է՝ կապիտալից ստացած տոկոսներով, ձեռնարկութիւններից ստացած եկամուտով, կալածանքների տւած արդիւնքով և այլն.

գ) մասնաւոր առևտրականները, վաճառականական ու առևտրական միջնորդները.

դ) վարդապետներն ու կրօնական պաշտամունքների հոգևոր սպասաւորները.

ե) նախկին սատիկանութեան, ժանդարմների յատուկ կորպուսի և պահնորդական բաժանմունքների ծառայողներն ու ագենտները, ինչպէս և Ռուսաստանում երբեմն թագաւորող տան անդամները.

զ) նրանք, որոնք որոշւած կարգով հոգեկան հիւանդ կամ խելագար են ճանաչւած. նաև այն մարդիկ, որոնք ինամակալութեան տակ են գտնուում.

է) նրանք, որոնք դատաւարուած են շահադիտական և վարկաբեկիչ յանցանքների համար՝ օրէնքով կամ դատովճառով սահմանած ժամանակով:

#### ԳԼՈՒԽ ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ

#### Ընտրութիւնների եղանակի մասին.

66. Ընտրութիւնները, համաձայն ընդունւած սովորութեան, տեղի են ունենում տեղական Խորհուրդների նշանակած օրերին:

67. Ընտրութիւնները կատարւում են ընտրողական կոմիտեի այն և տեղական Խորհրդի ներկայացուցչի ներկայութեամբ:

68. Այն դէպքերում, երբ Խորհրդային իշխանութեան ներկայացուցչի ներկայութիւնը տեխնիքական պայմանների շնորհիւ անհնար է, նրան փոխարինում է ընտրողական կոմիտեի այն նախագահը, իսկ նրա բացակայութեան դէպքում՝ ընտրողական ժողովի նախագահը:

69. Ընտրութիւնների ընթացքի և հետևանքի մասին արձանագրութիւն է կազմուում ընտրողական կոմիտեի այն անդամների և Խորհրդի ներկայացուցչի ստորագրութեամբ:

70. Ընտրութիւնների կատարման մանրամասն կարգը, ինչպէս և պրոֆեսիոնալ և այլ բանւորական կազմակերպութիւնների մասնակցութեան խնդիրը, որոշում են տեղական Խորհուրդները՝ համաձայն Հ. Կ. Գ. Կ. հրահանգի:

ԳԼՈՒԽ ՏՕՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Ընտրութիւնների ստուգման եւ բեկանման եւ պատգամաւորներին եւ կանկեյրու հարցի մասին.

71. Ընտրութիւններին վերաբերեալ բոլոր նիւթերը ուղարկուում են համապատասխան Խորհուրդը:

72. Խորհուրդը ընտրութիւններն ստուգելու համար նշանակում է մանդատային կոմիտսիս:

73. Ստուգութիւնների հետեանքի մասին մանդատային կոմիտսիսն զեկուցում է տալիս Խորհրդին:

74. Խորհուրդը լուծում է վիճելի թեկնածուների հաստատութեան խնդիրը:

75. Որեւէ թեկնածուի չհաստատման դէպքում Խորհուրդը նոր ընտրութիւններ է նշանակում:

76. Ամբողջ ընտրութիւնների անկանոնութեան դէպքում ընտրութիւնների բեկանման հարցը լուծում է Խորհրդային իշխանութեան յաջորդ վերին օրգանը:

77. Խորհրդային ընտրութիւնների կասսացիայի բարձրագոյն ինստանցիան Հ. Կ. Գ. Կ. է:

78. Այն ընտրողները, որոնք պատգամաւոր են ուղարկում Խորհուրդը, իրաւունք ունեն ցանկացած ժամանակը ետ կանչել նրան և նոր ընտրութիւններ կատարել՝ համաձայն ընդհանուր կարգի:

Բ Ա Փ Ի Ն Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

ԲԻԻՋԵՏՍՅԻՆ ԻՐՈՒՈՒՆՔ

ԳԼՈՒԽ ՏՕՍՆՎԵՑՆԵՐՈՐԴ

79. Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ֆինանսական քաղաքականու-

թիւնը աշխատաւորների գիտատուրայի ներկայ անցողական շրջանում նպատում է բուրժուազիայի էքսպրուպրիացիայի հիմնական նպատակին և նախապայմաններ ստեղծում Հանրապետութեան քաղաքացիների ընդհանուր հասարակութեան համար՝ հարստութիւնների արտադրութեան և բաշխման ասպարէզում: Այս նպատակով նա աշխատում է Խորհրդային իշխանութեան օրգանների տրամադրութեան տակ դնել այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են Խորհրդային Հանրապետութեան համապետական և տեղական կարիքների համար, առանց հաշի առնելու մասնաւոր սեփականութեան իրաւունքը:

80. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան պետական եկամուտներըն ու ծախսերը միացած կազմում են համապետական բիւջէն:

81. Խորհուրդների Համառուսական Համագումարը կամ Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէն որոշում են, թէ եկամուտների և տուրքերի որ տեսակներն են համապետական բիւջէի մէջ մտնում և որոնք տեղական Խորհուրդների տրամադրութեան տակ գրոււմ. զրա հետ միասին որոշում են նաև հարկատուութեան սահմանները:

82. Խորհուրդները հարկեր և տուրքեր են սահմանում միայն տեղական անտեսութեան կարիքների համար: Համապետական կարիքները բաւարարում են պետական գանձարանից արւած գումարների հաշիւն:

83. Պետական գանձարանի միջոցներից չի կարելի որեւէ ծախս անել, եթէ նրա համար կրեղիտ չկայ պետական երևմտային ցանկում կամ եթէ Կենտրոնական իշխանութիւնը յատուկ որոշում չունի հրատարակած:

84. Համապետական նշանակութիւն ունեցող կարիքների բաւարարման համար համապատասխան ժողո-

վրդական կոմիսսարիատների կողմից տեղական Խորհուրդների արամադրութեան տակ են գրւում անհրաժեշտ կրեդիտներ պետական գանձարանից:

85. Պետական գանձարանի միջոցներից Խորհուրդների արամադրութեան տակ գրւած բոլոր կրեդիտները, ինչպէս և՛ համաձայն նախահաշիւների՝ տեղական կարիքների համար հաստատուածները, ծախուում են Խորհուրդների ձեռքով՝ նախահաշիւների (պարագրաֆների և յոդւածների) սահմաններում՝ ճիշտ այն բանի վրայ, ինչի համար նշանակւած են, և չեն կարող այլ պահանջների բաւարարման համար գործադրել: Ասանց Հ. Կ. Գ. Կ. և Ժ. Կ. Խ. յատուկ որոշման:

86. Տեղական Խորհուրդները կազմում են եկամուտների և ծախսերի կիսամեայ և տարեկան նախահաշիւներ՝ տեղական կարիքների համար: Վիզական, գաւառամասային և գաւառական համագումարներին մասնակցող քաղաքների Խորհուրդների նախահաշիւները, ինչպէս և Խորհրդային իշխանութեան գաւառական օրգանների նախահաշիւները, հաստատուում են համապատասխան նահանգական և երկրամասային համագումարների կամ նրանց գործադիր կոմիտէների կողմից: Խորհրդային իշխանութեան քաղաքային, նահանգական և երկրամասային օրգանների նախահաշիւները հաստատուում են Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի և Ժողովրդական Կոմիսսարների Խորհրդի կողմից:

87. Նախահաշիւներում չնախատեսւած ծախսերի, ինչպէս և նախահաշիւներում նշանակւածների անբաւարարութեան դէպքում Խորհուրդները լրացուցիչ կրեդիտներ ստանալու համար դիմում են համապատասխան ժողովրդական կոմիսսարիատներին:

88. Երբ տեղական միջոցները չեն բաւարարում տեղական կարիքներին, այդ դէպքում անյետաձգելի

ծախսերը ծածկելու համար անհրաժեշտ նպաստները կամ փոխառութիւնները տեղական Խորհուրդներին թողարոււմ է ստանալ պետական գանձարանից Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէն կամ Ժողովրդական Կոմիսսարների Խորհուրդը:

**Բ Ա Փ Ի Ն Վ Ե Յ Ե Ր**

**ՌՈՒՍՍՍԱՏՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏՍԻՆ ԽՈՐՀՐԴՈՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՆԿԱՆ ԿՈՄԻՏԵ**  
**ՆՂԱՆԸ (ԳԵՐԲ) ԵՒ ԴՐՈՉԱԿԸ.**



**ԳՂՈՒՄ ՏՍՄԵՏՈՒԵՐՈՐԴ**

89. Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. պետական նշանն է՝ կարմիր ֆոնի վրայ, արևի ճաճանչների մէջ նկարւած ոսկէ մանգաղ և մուրճ՝ խաչաձև իրար վրայ գրւած, կոթերը ներքև, շրջապատւած հասկերի պտակով և վրան գրւած՝ ա) Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութիւն:

և բ) Պրոլետարներ բոլոր երկրները, միացէք:

90. Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. առևտրական, ծովային և զինւորական գրոշակը ալ-կարմիր գոյնի քաթան է, որի ձախ անկիւնում, վերեւ կողմը, կոթի մօտ տեղաւորւած են հեռեկայ տառերը՝ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. կամ գրւած՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութիւն:

Նախագահ Ծ-րդ Խորհ. Համ. Համագումարի եւ Հ. Կ.

Գ. Կ. Եւ. Սվերդլով.

- Հ. Կ. Դ. Կ. Նախագահութեան
  - անդամներ
  - Հ. Կ. Գ. Կ. Գարսուլար՝ Վ. Ա. Աւանեսով:
- Տ. Ի. Տեղորոշ
  - Ֆ. Ա. Ռոզին.
  - Ս. Պ. Ռոզենզոլց
  - Ա. Խ. Միսրոֆանով
  - Կ. Գ. Մախիմով.



Handwritten mark: *M*

« Ազգային գրադարան »



NL0215083

35.183